ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/278

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Յունիպրոտեկտ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝ «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վ. Գաբրիելյանի, ներկայացուցիչ՝ Գ. Ավետիսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցում, պահնորդական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18438-2020 գրությամբ «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 27.11.2020թ.-ի թիվ 01/10277 և 08.12.2020թ.-ի թիվ 01/10-292 գրությունների հիման վրա, 11.12.2020թ.-ին «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 11.12.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 14.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/278 համարի ծածկագիրը:

18.12.2020թ.-ին, 29.12.2020թ.-ին 11.01.2021թ-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 29.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.01.2021թ.-ին:

2. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 27.11.2020թ.-ի թիվ 01/10277 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/3 ծածկագրով գնման Ընթացակարգ, որի շրջանակներում ընտրված մասնակից է ճանաչվել «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ն (այսուհետև նաև՝ Մասնակից): Անգործության ժամկետը լրանալուց հետո՝ 09.11.2020թ.-ին, Պատվիրատուն պայմանագիր կնքելու վերաբերյալ

ծանուցումը և պայմանագրի նախագիծը ներկայացրել է Մասնակցին, որը վերջինիս կողմից սահմանված ժամկետում՝ մինչև 23.11.2020թ չի ներկայացրել, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Մասնակիցը զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ. պարբերությամբ, խնդրում եմ նախաձեռնել «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, Պատվիրատուն 08.12.2020թ.-ի թիվ 01/10-292 գրությանը կից ներկայացվել է «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 11.12.2020թ.-ին գրությամբ դիմել է «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18438-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ բանավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2020/278 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով 15.10.2020թ.-ին հայտարարվել է «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման

հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ն:

ii. «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդածի 6-րդ մասը, որոշել է ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ին:

iv. 28.10.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր:

v. Պատվիրատուն, 09.11.2020թ.-ին Մասնակցի՝ uniprotect@yahoo.com էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացնելով «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ խնդրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաստատված պայմանագրի 2 /երկու/ օրինակները և պայմանագրի ու որակավորման ապահովումները ներկայացնել «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ՝ Ֆանարջյան 76 հասցեով:

vi. «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ն 16.11.2020թ.-ի գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել հետևյալը.

««Յունիպրոտեկտ» ՍՊ ընկերությունը մասնակցել է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 2020 թվականի հոկտեմբեր ամսին հայտարարված N ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/3 ծածկագրով մրցույթին և ճանաչվել է հաղթող:

09.11.2020թ. «Յունիպրոտեկտ» ՍՊ ընկերությանը էլեկտրոնային եղանակով ուղարկվել է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար պահնորդական ծառայությունների գնման N ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/3 պայմանագիրը /այսուհետ՝ նաև Պայմանագիր/ կնքման համար:

Պայմանագրի բովանդակությունից պարզ է դառնում, որ պայմանագրով նախատեսված պահպանությունը պետք է իրականացվի առնվազն 4 /չորս/ պահնորդի միջոցով:

Սակայն, Պայմանագրի և դրա համապատասխան հավելվածների բովանդակությունից պարզ չէ, թե քանի հենակետ պետք է պահպանության տակ առնվի «Յունիպրոտեկտ» ՍՊ ընկերության պահնորդների կողմից և որտեղ է գտնվելու այն հենակետը, որը պետք է պահպանության տակ առնվի:

Մինչդեռ, մինչև մրցույթին մասնակցության հայտ ներկայացնելը, ինչպես նաև մրցույթի անցկացման փուլում, «Յունիպրոտեկտ» ՍՊ ընկերության ներկայացուցիչների կողմից հեռախոսակապի միջոցով մի քանի անգամ պարզաբանվել է այն հարցը, թե Պայմանագրի կնքման դեպքում քանի հենակետ պետք է պահպանության տակ առնվի 4 /չորս/ պահնորդների միջոցով:

Ի պատասխան մեր հարցին, մրցույթի կազմեկպչի ներկայացուցիչը, ում հետ մասնավորապես կապ ենք հաստատել և զրուցել 010 28-76-81 հեռախոսահամարով, հստակ հայտնել է, որ Պայմանագրի կնքման դեպքում 4 /չորս/ պահնորդների միջոցով պահպանության տակ պետք է առնվի ընդամենը 1 /մեկ/ հենակետ, ինչպես նաև հստակ հայտնվել է, որ 4 /չորս/ պահնորդից ավելի չի պահանջվելու ծառայության մատուցման համար: Ընդ որում, հենց այդ հանգամանքը հաշվի առնելով էլ, «Յունիպրոտեկտ» ՍՊ ընկերության կողմից ներկայացվել է համապատասխան գնային առաջարկը, ինչն էլ հանգեցրել է վերջինիս կողմից այդ մրցույթում հաղթող ճանաչվելուն:

Նշենք նաև, որ վերոնշյալ հեռախոսազրույցները ձայնագրված են և անհրաժեշտության դեպքում դրանք կարող են ներկայացվել ինչպես «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին, այնպես էլ այլ իրավասու մարմնին:

Սակայն, ինչպես վերը նշել ենք, «Յունիպրոտեկտ» ՍՊ ընկերությանը էլեկտրոնային եղանակով ուղարկվել է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար պահնորդական ծառայությունների գնման N ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/3 պայմանագիրը, որի բովանդակությունից պարզ չէ, թե Պայմանագրի կնքման դեպքում 4 /չորս/ պահնորդի միջոցով քանի հենակետ պետք է պահպանության տակ առնվի «Յունիպրոտեկտ» ՍՊ ընկերության պահնորդների կողմից: Ավելի կոնկրետ, Պայմանագրում նշված չէ այն մասին, որ Պայմանագրի կնքման դեպքում 4 /չորս/ պահնորդի միջոցով պետք է իրականացվի 1 /մեկ/ հենակետի պահպանություն, ինչպես նաև նշված չէ, թե որտեղ պետք է գտնվի այդ հենակետը, որպիսի բացթողումն ու

անորոշությունն ըստ էության խոչընդոտ է հանդիսանում Պայմանագի կնքման համար և, որը պարզաբանելուց և հստակեցնելուց հետո միայն հնարավոր կլինի կնքել Պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից, կարևորելով և բարձր գնահատելով «Յունիպրոտեկտ» ՍՊ ընկերության և «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերության հետագա համագործակցության նպատակը կամ համագործակցության անհնարինության դեպքում երկու ընկերությունների հետագա բարիդրացիական հարաբերությունների պահպանման նպատակը, խնդրում ենք «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար պահնորդական ծառայությունների գնման N ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/3 պայմանագրում և դրա համապատասխան հավելվածներում հստակեցնել և նշել այն պայմանը, որ Պայմանագրի կնքման դեպքում 4 /չորս/ պահնորդի միջոցով պետք է իրականացվի 1 /մեկ/ հենակետի պահպանություն, ինչպես նաև նշել, թե որտեղ պետք է գտնվի այդ հենակետը, որի դեպքում միայն հնարավոր կլինի կնքել պայմանագիրը:»:

vii. Հանձնաժողովի նիստի թիվ 2/1 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները, ուստի Մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18438-2020 գրությամբ «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա

ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի

ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով 15.10.2020թ.-ին հայտարարված «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից և պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից 28.10.2020թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր: Պատվիրատուն, 09.11.2020թ.-ին Մասնակցի՝ uniprotect@yahoo.com էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացնելով «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ խնդրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաստատված պայմանագրի 2 /երկու/ օրինակները և պայմանագրի ու որակավորման ապահովումները ներկայացնել «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ՝ Ֆանարջյան 76 հասցեով:

Հանձնաժողովի նիստի թիվ 2/1 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները, ուստի Մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՈՒԱԿ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Անդրադառնալով սույն գործի քննության ընթացքում Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերին ու հանգամանքներին, մասնավորապես՝ 16.11.2020թ.-ին Պատվիրատուին ուղղված գրությանն ու Մասնակցի կողմից ներկայացված հեռախոսային ձայնագրությանը, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ

ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխա-նատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվում է պայմանագիր կնքելուց: Ուստի, այն դեպքերում, երբ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն խախտման և պայմանագիր կնքելուց հրաժարվելու արդյունքում բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ

վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործում առկա փաստերի՝ գնման ընթացակարգի հայտարարության և հրավերի, ինչպես նաև Մասնակցի կողմից ներկայացված հեռախոսային ձայնագրության ուսումնասիրության արդյունքում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ Հրավերի Հավելված 1.1-ով Պատվիրատուի կողմից հստակ սահմանվել է, որ պահպանությունը պետք է իրականացվի առնվազն 4 /չորս/ պահնորդի միջոցով, որոնք կարող են փոփոխվել պատվիրատուի առաջին իսկ պահանջի դեպքում, ավելացնելով կամ նվազեցնելով պահնորդների քանակը, ինչպես նաև նույն հավելվածով առկա չէ հենակետերի կամ դրանց քանակների վերաբերյալ որևէ պահանջ: Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ սույն գործի քննության ընթացքում Մասնակցի կողմից ներկայացված հեռախոսային ձայնագրությամբ չի հիմնավորվում, որ պահպանության ենթակա է միայն մեկ հենակետ, ինչպես նաև հրավերով հստակ սահմանվել է, որ պահնորդների քանակի փոփոխության դեպքում պայմանագրի գինը համապատասխանաբար կավելանա կամ կնվազի, որպիսի պայմաններում ձայնագրության և հրավերի տեխնիկական բնութագրի պայմանների միջև հակասություն նույնպես առկա չէ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ի կողմից ստանձնած պարտավորությունների խախտմանը չէր կարող նպաստել «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում առկա հենակետերի քանակի մասին տվյալների բացակայությունը, որպիսի պայմաններում «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18438-2020 գրությամբ «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/278 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Յունիպրոտեկտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**